Զարմանք ահրկ ինձ դիտովին՝ թէ մերկանգամ ծագք զեմրդ,
Ի մերկ յոստոց կանաչամոյր զարդարեցան զեղազարդ.
Ո՞ հաւատայր տղեղագէմ և գոտացեալ բոյսք և տունկք,
Շրջեալ այսպէս փառազարդել զերմի յոգենեան ծառատունկք.
Ցարդ իշխեր մեզ հոգմ ըգարար և ցուրտն ձմերան զառնաշունչ,
Ահա զեփիւռն մեզ զովասիրուն հնչէ խաղաղ կենսաշունչ.
Արդ հաշտութիւն. արդ քաղցրութիւն. արդ սէր ծաւալ ի բնութեան,
Ցառմենեսին համատարած խաղայ խնդանք բերկրութեան.
Ո՜վ. արդարև մեծ ես դու Տէր՝ դու և առնես զքանչելիս.
Զանցուսային զձնեսս ի գեղ և ի կարգս ի բազիս,
Զի ի կամաց քոց միմիայն կախին բնութիւնք ամենայն.
Որպէս կամիս նոյնպէս շարժին զի հպատակ տեառնդ կան.
Ա՜խ. Հայկազանցս Տէր, թո՛ղ աշխարհ զերմի պերճ գարուն նորաստանչ,
Քեզ նորագեղ բարեկարգեալ զայցէ յերև ճօխապանծ.
Տե՛ս՝ որպիսի՞ նախատեն մեզ աբք փանարի չարաբեր . . .
Եւ զրացիք ծիծաղին զմեզ՝ ծառայք յառնեն ընդդէմ մեր.
Նորակրօնք եղեալ են զայդ զառնագեսս ձեւացեալ,
Հնչեն ի մեզ հոգեառատուս հոգիք թիւր ուսմանիք շաղաղեալ.
Որով և սիրոյք մեր ի միմեանց պաղեցուցեալ ատակապին,
Տիրեն մեզ հեռք ատելութիւնք և անջատումն զառնագին.
Վասնորոյ Տէր՝ դու յարուցեալ զմեզ յայրդս Հայկազեան,
Զի ժամանակն արդ զմեզդ հասեալ է ժամն իսկական.
Քաղցրահայեաց երևեցո՛ արփիագեղ դէմք քոյին,
Զմեռնացեալ սառնատաս ոյց . . . թշուառակիր աշխարհին.
Իցէ՞ ջերմիւ անեղ արիւնդ սառնամանիք մեր սրսից,
Դէմ հալելով և ի հոգւոյդ հնչեսցէ սիգ զովալից.
Որով մնաց մեր անդաստանք ծաղկօք ուսման պճնեսցի,
Եւ սէր անկեղծ հոգեպարար ի հոգիս մեր ապեսցի.
Եւ երբ այսպէս յեղաշրջեալ անիւք ամաց բարեբաստ,
Գարուն չքնաղ զառնայ ի մեզ՝ հողմք լռեսցին չարաստաս.
Ի հայրենիս հարազատք մեր եկեալ սիրով անկասկած,
Ո՜հ միարան յայն վեհ գարնան տացուք փառս քեզ Աստուած.

Գրիգոր Ա-բարգիզ Ա՝ապրիլեանեան

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՍՆԱՓԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՇԱՀԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ո՛չ մէկ մարդութեանց չաստուածն չունի աշխարհս այս վերայ այնչափ երկրպագուք և խնկարկուք, որքան որ այս երկու զլխաւոր ախտից ստուածուհիներ, ամէն տեղ սոցա համար փառաւոր մեհեանններ, ամէն տեղ սոցա բարձրաբերձ բագիններ, ամէն քաղաքաց և գիւղից մէջ սոցա համար երգեցիկ գուսաններ և մարգարէներ պատրաստ են։ Քրիստոնէութիւնն, որ իւր կենսարար վարդապետութիւններով կոսպաշտութեան դէմ այնչափ պատերազմեցաւ, կռատունները տապալեց և կռա-

պարիշտները 'ի լոս Աստուածդիտութեան վերաձեց, տակաւին չ'կարողացաւ այս երկու անգութ Աստուածուհեաց վերայ կատարեալ յաղթանակ կանգնել, և սոցա արբանեակներ բոլորովին աշխարհէս ջնջել. Երջիր փողոցներըն, ամենէն աւելի սոցա աշակերտեալք կ'տեսնես. Մտիր վաճառանոց, ուր կ'տեսնես այս արիւնարբու Աստուածուհիքը յաղթական դրօշ ձեռքերնին կանգնած, առևտրական անարատ հաշուոց մէջ իրենց խարդախութեան որոմն ցանելով, անդադար կ'նրաքանչեն իրենց անթիւ ախոյեանները. որք 'ի պատիւ սոցա կ'պատերազմին եղբայր՝ եղբօր, բարեկամ՝ բարեկամի, որդին՝ հօր, և ծառայն՝ տիրոջ դէմ. Գնա մտիր համարիւն սիրասուն գերդաստանի մէջ. կ'տեսնես այն տեղ, որ սոքա զահագլուխ բաղմած, անմիաբանութեան չարագուշակպատգամներ կարձակեն. բարեմիտ և խաղաղասէր ընտանիքը խռովութեամբ կ'լեցնեն. իրարու դէմ կ'յարուցանեն, և նախանձելի միութիւն քայքայելով տունը կ'կործանեն. Միևնոյն՝ համասեռ մարդկային ազգն, կ'տեսնես որ սոցա թելադրութեամբ միմեանց դէմ հուր կ'փայլատակեն, սուր կշողացնեն, որոգայթներ կ'լարեն, անմեղաց արեամբ գետինը կ'ոռոգեն. Սոցա համար ջերմեռանդ հաւատարիմ պաշտօնեաներ կ'հանդիսանան Ատրիզասներ, Ֆինկիզիանները, Տուզրիներ և Լէնկթէմուրներ, որոնք բոլոր աշխարհը այս որերիմ Աստուածուհեաց զոհելու իրենց բոլոր ճիգն թափեցին. Երանի՜ թէ մեր Ազգային պատմական էջերն ևս չ'ներկայացնէին սոցա արբանեկաց անունները. բայց՝ աւա՜ղ կ'տեսնենք Մեհրուժաններ, Վասակներ և այլ այսպիսիք, որոնք՝ իրենց համազգեաց արեամբ հաւատարիմ ծառայութեան անթերի պարտք հատուցին այս երկու այլանդակ ճիւաղաց. Եւ որ աւելի ցաւալին է, իններորդ դարուն Հայաստանն սոցա զոհագործութեան բագին մը դարձաւ իրենց ընտիր ախոյեան Գագիկ Արծրունոյն առաջնորդութեամբ. որոյ յիշատակն սարսուռ և կսկիծ կ'ազդեն տակաւին ազգայուն Հայկազանց սրտերը. Եթէ աշխարհը շրջիս, կ'տեսնես վանօրէից, հին մայրաքաղաքաց, աւանաց և գիւղից աւերակներ, որոնք մեծաւ մասամբ այս մարդախոշոշ տիրապետաց զոհ եղած են. Գնա պատերազմի դաշտը. կ'սարսափիս, տեսնելով որ, 'ի սպաս փառաց Աստուածուհեացն՝ կ'տեղան նետեր, կ'որոտան թնդանօթներ, կճռճան նիզակներ և կարձակուին հրացաններ, որով թաւալգլոր կ'խաղան անթիւ մարդազոհեր, որոց ծուխ բարդ 'ի բարդ կ'ծառանայ 'ի հոտ անուշից այս երկու մարդախանձ անագորոյն բռնաւորաց. Եթէ սարսափ պատեցին քեզ այս ահաւոր տեսարաններ, ապա ո՞ր աստիճան սոսկումն, դողումն և զարմանք պիտի պաշարեն քո սիրտը, երբոր մտնես Ամենակալին Սրբավայր նուիրական Տաճարը. ուստի թէ և հանապազ կ'որոտան սոցա դէմ Աստուածատաս շանթեր և կայծակներ Առաքելական և Մարգարէական ընթերցուածներէն և հոգելից քարոզչաց և Աստուածաբան վարդապետաց բերաններէն, բայց սոքա անամոթ և անպատկառ, կարհամարհեն այդ սոսկալի վտանգները, ներս կ'մտնեն, նոյն իսկ իրենց թշնամիներէն և նոցա պարագլուխներէն իրենց մահագուշակ կրից այսինքն խռովութեան, ատելութեան, նախանձու, գայթակղութեան և մեղկութեան պաշտպաններ կ'գտնեն. և Աւետարանն սուրը, որ իրենց դեմ մահացու զէնք մի է, իրենց մոլեգնութեան գործիք անելով, կուտան սոցա ձեռքը. որով գլխաւորութեան, անսխալութեան, իրաւասութեան և բանալեաց ժառանգութեան խնդիրներ և կրօնական տարակարծիք վէճեր յարուցանելով, իրենց դեմ պատերազմի վիճավայր տեղը, իրենց յաղթութեան հանդիսարան կ'դարձուցեն. Աւելի պարզ ասելով, այս խարամանկ Աստուածներէն յորդորուելով՝ ինչեր չ'գործեցին Ֆիզվիթներ 'ի վնաս մարդկութեան և լուսաւորութեան. Սպանիոյ մէջ այն զարհուրելի Ալֆոյ տափէն առ ի՞նչ կ'պատրաստուէր. Թողունք Եւրոպայ. Հայաստանի մէջ, Ունիթոռաց, այն կրօնաղեղծ որսորդաց սոսկալի խռովութեանց և ազգաւեր զաւանութեանց նպատակն ի՞նչ էր. Ի՞նչ չարիքներ մեացին, որ չ'գործեց անիծապարտն Նիկոլ՝ Լեհաստանի մերազնէից դէմ. որոց ազգութիւնը կորստեան մատնելու պատճառ դարձաւ 'ի պատիւ անձնական փառասիրութեան և շահասիրութեան. Այս այսպէս այժմ ցաւոք սրտի դուրս եկ Եկեղեցիէն՝ մտիր Դպրոցը, այս հաւասարութեան՝ առաքինութեան և լուսաւորութեան գործարանը, ուր այս չաստուածուհեաց ըստանման համար մտաւոր զէնքեր կ'պատրաստուին, մանկական բերաններ կ'գոռան, սոցա դէմ մահ

կ'սպառնան, նոցա ձեռքեր բարձրական սրեր կ'սրեն, սոցա կորստեան համար որոգայթներ կ'լարեն. բայց ի՞նչ անես, այստեղ դիւրաւ մուտ կ'գործեն այս մեր գաղտագողի աղուէսունք. իրենց համար հաւատարիմ արբանեակներ կ'գտնեն նոյն իսկ Դպրոցական պաշտօնեաներ, նոցանից ամենէն աւելի յարգանք կ'ստանան; նոցա ձեռքով այդ լուսավոր գործարանը հիմն 'ի վեր կ'տապալեն. որոց աւերակաց վերայ տոցա յաղթութեան դրօշն կ'կանգնի. Ա՛յլ ևս ի՞նչ երկարեմ. ասածներէս կարծեմ բաւական կ'ապացուցվի թէ՝ այս երկու գլխաւոր ախտեր ինչպէս հաստատուն տիրապետութիւն ստացած են մարդկային բնութեան վերայ. և արդեաւ չարիքներով լցուցած են թէ հին և թէ նոր աշխարհը իրենց աշակերտելոց ձեռքով. որոց համար լալով ասէր Առաքեալն "իբրև զթշնամեաց խաչին Քրիստոսի"։

Այս աշխարհակործան լծակից հարազատներ ունին իրենց համար և տարբեր արբանեակներ, որոց առանձնական չարիքներէն աւելի նշանաւորաց համար նաև պարտք կ'համարիմ որոշ համառօտ յօդուածով մի խօսիլ։

Մ. Պը-ղ-ան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳՐՈՑ

ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Էրբրաբ ամսագրոյս ներկայ թուով երկրորդ շրջանը աւարտեալ լինելով, Խմբագրութիւնը կը փութայ յայտնել և միանգամայն խնդրել իւր Ընդոյ բաժանորդներէն, որպէս զի օր յառաջ իսպեհաճին ամէն Հայաբնակ քաղաքներում Տպարանական Ժողովոյ կողմանէ նշանակուած Գործակալաց կանխիկ վճարել ՃՐ ռուբլի բաժանորդագինները ամսագրոյս երրորդ շրջանին համար՝ իւրեանց Հայաստանեայց հեռ 'ի միասին։

Այն ամսագրոյս սիրելի Ընդայնոց մէջ գտած համակրութիւնը և ընդունելութիւնը խրախուսած է՝ մանաւանդ պարտաւորած զԽմբագրութիւն սորին՝ մի և նոյն գնով (4 ռ.) բայց փոխանակ էրէ+է՝ ՃՐ թերթով և երբեմն (անցեալ տարուան պէս) յաւելուածով հրատարակել Ամսագիրը։

Ենշուշա եմք, որ մեր սիրելի Ընդայինք՝ Խմբագրութեան այսպիսի անօրէնութենէն զոհ և ուրախ զգացմանց ենթարկուելով, յառաջակայում առաւել ևս համակրութեամբ և ընդունելութեամբ մեծարած Էրբրաբը, նաև կրկին պիտի քաջալերէ Խմբագրութիւնը հեազհեազ ուրիշ կարևոր և օգտաւէտ փոփոխութիւնք յաւելացնելու։

Իսկ իւրաքանչիւր ամսագիրները 'ի ժամանակին բաժանորդաց փութով հասուցանելոյ ազատաւ՝ Տպարանական Ժողովոյ ձեռք առած միջոցաց և կարգած Գործակալաց շնորհիւ, կը յուսամք, զի այս առիթով պատահած դժգոհութեանց այլ ևս տեղիք մնալու չէ։ Գործակալաց անուանքը պէտք է շարունակ հրատարակուին Էրբրաբայ կազմի վերջին երեսում։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ